

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ԶԳ ԱՐՏԱԳԱՆՍԱՆ
ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Նորայր ՄԱԼԽԱՍՅԱՆ
ՀՊՃՀ ասպիրանտ

Բանալի բառեր. արտահանում, ներմուծում, համախառն ներքին արդյունք,
մրցունակություն, շուկա

Ներածություն

Աճող միջազգային առևտուրը, երկրների միջև համագործակցության խորացումը և տեղեկատվական տեխնոլոգիաների առաջընթացը պայմանավորում են տնտեսական ինտեգրման գործընթացի արագացում: Միջազգային տնտեսական ինտեգրումը, լինելով տնտեսական զարգացման և աճի արդյունավետ միջոց, մյուս կողմից պայմանավորում է, որպեսզի ինտեգրված տնտեսական տարածքում ստեղծված երկրների տնտեսությունները ընդունակ լինեն արտահանել իրենց տնտեսությունների մրցունակությունը ինչպես միասնական տնտեսական տարածքում, այնպես էլ այդ տարածքից դուրս:

Առաջարկվող աշխատանքը նվիրված է ՀՀ արտահանման մրցունակության ուսումնասիրությանը և վերլուծությանը միջազգային շուկաներում:

Բացահայտվում են արտահանման մրցունակության համեմատական առավելության ինդեքսները ՀՀ-ից արտահանվող ապրանքների համար, հիմնված այդ ինդեքսի գնահատմանը միջազգային շուկաներ արտահանվող - ներմուծվող ապրանքների ծավալների վրա :

Մեթոդաբանությունը

ՀՀ-ից միջազգային շուկաներ առաջարկվող արտահանման մոդելները հիմնված են ռեգրեսիոն մոդելավորման վրա: Ցույց է տրվում, որ ՀՀ-ից ԵՄ արտահանումը ԵՄ-ի համախառն ներքին արդյունքի վրա ազդեցություն չի գործում, քանի որ ստացված ռեգրեսիոն մոդելը նշանակալի չէ: Սակայն պատկերը փոխվում է, երբ ուսումնասիրում ենք ԵՄ-ից ԱՊՀ ներմուծման մոդելը. այս դեպքում ԵՄ-ից ՀՀ ներմուծումը ազդում է ՀՀ-ի ՀՆԱ-ի վրա: Հետաքրքրություն է ներկայացնում ՀՀ-ից ԱՊՀ արտահանման մոդելը՝ հիմնված հեռավորության փոփոխականի և ներմուծող երկրի ՀՆԱ-ի վրա: Առաջարկվող մոդելը նշանակալի է:

Բացահայտվում է արտահանման մրցունակության համեմատական առավելության բալասայի (Balassa, 1965) ինդեքսը ՀՀ-ից ԵՄ և ԱՊՀ երկրներ արտահանման-ներմուծման համար: Այս ինդեքսը որոշվում է հետևյալ կերպ.

$$ՄԻ = \ln \left[\frac{Exp_i}{Imp_i} \right] \times \left[\frac{\sum_i Exp_i}{\sum_i Imp_i} \right] \times 100,$$

որտեղ ՄԻ - մրցակցության ինդեքսն է,

Exp_i - i-րդ տեսակի ապրանքի արտահանումն է,

Imp_i -i-րդ տեսակի ապրանքի ներմուծումն է :

ՄԻ ինդեքսի դրական արժեքը ցույց է տալիս, որ i-րդ ապրանքը համապատասխան շուկայում ունի համեմատական առավելություն և, հակառակը, բացասական նշանը վկայում է այն մասին, որ այդ ապրանքը համեմատական առավելություն չունի:

Ուսումնասիրվում են ՀՀ-ում արտադրվող և արտահանվող ապրանքների համեմատական առավելության ինդեքսները ԵՄ և ԱՊՀ շուկաների օրինակով:

ՀՀ արտահանման և ներմուծման որոշիչները

Ապրանքների և ծառայությունների արտահանումը և ներմուծումը նշանակալի ազդեցություն ունեն ինչպես ՀՀ, այնպես էլ գործընկեր երկրների ՀՆԱ-ների վրա:


Սկսած անկախություն ստացած 1991 թվականից ՀՀ-ի արտաքին տընտեսական գործունեությանը վերաբերող վիճակագրական տվյալները գրանցվել են ԱՊՀ երկրների վիճակագրական տարեգրքում: ՀՀ-ը մինչ այժմ ունի արտաքին առևտրի բացասական սալդո: Այսպես, 2011-2013 թվականների ընթացքում ՀՀ-ի արտաքին առևտրի ցուցանիշները վկայում են այն մասին, որ ՀՀ-ի միջազգային առևտրի բնագավառը կարիք ունի հիմնովին փոփոխվելու՝ ավելացնելով ՀՀ-ից ապրանքների և ծառայությունների ծավալը (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. ՀՀ-ի արտաքին առևտրի ցուցանիշները

	2011		2012		2013	
	Արտ.	Ներ.	Արտ.	Ներ.	Արտ.	Ներ.
ԱՊՀ	268062	1208823	336604	1334524	400162	1299948
Այլ երկրներ	1066276	2936508	1043595	2926708	1078585	3085917
Ընդամենը	1334338	4145332	1380199	4261232	1478748	4385865
Արտահանման տոկոսը ներմուծման նկատմամբ	32,2		32,4		33,7	
Ապրանքաշրջանառություն	5479670,8		5641431,9		5864614,5	
Ապրանքաշրջանառություն տոկոսային աճ			2,95		3,96	
Արտահանման տոկոսային աճ			3,44		7,14	
Ներմուծման տոկոսային աճ			2,8		2,92	
ԱՊՀ արտահանման տոկոսային աճ			25,57		18,88	
ԱՊՀ ներմուծման տոկոսային աճ			10,4		-2,59	
Այլ երկրներ արտահանման տոկոսային աճ			-2,13		3,35	
Այլ երկրներ ներմուծման տոկոսային աճ			-0,33		5,44	

ՀՀ և ԵՄ երկրների կորելյացիան տրված է նկար 1-ում, որտեղ տրեմըը ներկայացնող ուղիղը արտահայտում է բացասական կորելյացիա :


Նկար 1. ՀՀ և ԵՄ երկրների կորելյացիան



Խորվաթիայի և Լատվիայի մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ծավալները մեծ են, իսկ Էստոնիան և Լյուքսեմբուրգը ունեն փոքր ծավալի ՀՆԱ: Նշենք, որ և ՀՀ-ից ապրանքների արտահանման ծավալը այդ երկրներ փոքր է:

Կորելյացիայի գործակիցը (նկար 2) ՀՀ-ից արտահանման ծավալի և ԵՄ երկրների ՀՆԱ-ի միջև բացասական է: Դա բացատրվում է նրանով, որ ՀՀ-ի մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն առնվազն յոթ և ավել անգամ փոքր է, քան ԵՄ երկրներում:


Նկար 2. Կորելյացիայի գործակիցը ԶԶ-ից արտահանման ծավալի և ԵՄ երկրների ՀՆԱ-ի միջև



Որքան մեծ է ԵՄ երկրների և ՀՀ -ի միջև հեռավորությունը, այնքան փոքր է այդ երկրից ՀՀ ապրանքների ներմուծման ծավալը:


ԵՄ երկրների և ՀՀ-ի միջև կորելյացիայի գործակիցը տրված է նկար 3-ում՝ կորելյացիան բացասական է:

Նկար 3. ԵՄ երկրների և ՀՀ-ի միջև կորելյացիայի գործակիցը




ՀՀ-ի ՀՆԱ-ի և ԵՄ երկրներից ՀՀ արտահանման ծավալի կորելյացիան տրված է նկար 4-ում, որտեղ կորելյացիան, ինչպես և սպասվում էր, դրական է:

Նկար 4. ՀՀ-ի ՀՆԱ-ի և ԵՄ երկրներից ՀՀ արտահանման ծավալի կորելյացիան



Որքան մեծ է ՀՀ-ի և ԵՄ երկրների միջև հեռավորությունը, այնքան փոքր է ԵՄ երկրից ՀՀ ապրանքների ներմուծման ծավալը: Կորելյացիայի գործակիցը ՀՀ-ից ԵՄ երկրներ արտահանման ԵՄ երկրներից ՀՀ ներմուծման միջև տրված է նկար 5-ում: Կորելյացիայի գործակիցը դրական է:

Նկար 5. Կորելյացիայի գործակիցը ՀՀ-ից ԵՄ երկրներ արտահանման ԵՄ երկրներից




Որքան մեծ է ՀՀ-ի և ԱՊՀ-ի երկիր միջև հեռավորությունը, այնքան փոքր է ՀՀ-ից այդ երկիր արտահանվող ապրանքների ծավալը:

ՀՀ-ից ապրանքներ ներմուծող երկրի ՀՆԱ-ի գործակիցը դրական է ու հետևաբար, որքան այդ երկրի ՀՆԱ-ն մեծ է, այնքան այդ երկրի և ՀՀ միջև “առևտրի ձգողականությունը” մեծ է՝ ՀՀ-ից արտահանվող ապրանքների ծավալը մեծ է:


Նկար 6-ում ներկայացված է ՀՀ-ի և ԱՊՀ երկրների միջև հեռավորության և ՀՀ արտահանման միջև կորելյացիայի գործակիցը: Հեռավորության փոփոխականի գործակիցը բացասական է:

Նկար 6. ՀՀ-ի և ԱՊՀ երկրների միջև հեռավորության և ՀՀ արտահանման միջև կորելյացիայի գործակիցը




Նկար 7-ում ներկայացված է ԱՊՀ երկրների ՀՆԱ-ի և ՀՀ արտահանման միջև և, ինչպես սպասվում էր, ՀՆԱ գործակիցը դրական: Դա վկայում է այն մասին, որ որքան մեծ է երկրի ՀՆԱ-ն, այնքան ՀՀ-ից արտահանվող ապրանքների ծավալը մեծ է: Այսպես, օրինակ, Ռուսաստանի Դաշնության և Ղազախստանի ՀՆԱ-ները մեծ են և այդ երկրներ ՀՀ-ից արտահանվող ապրանքների ծավալը նույնպես մեծ է:

Նկար 7. ԱՊՀ երկրների ՀՆԱ-ի և ՀՀ արտահանման միջև ՀՆԱ գործակիցը



Նկար 8-ում տրված է ՀՀ-ի ՀՆԱ-ի և ՀՀ-ից ԱՊՀ երկիր արտահանման կորելյացիայի գործակիցը, իսկ ՀՀ-ի ՀՆԱ-ի փոփոխականի գործակիցը դրական է, ինչպես և սպասվում էր:

Նկար 8. ՀՀ-ի ՀՆԱ-ի և ՀՀ-ից ԱՊՀ երկիր արտահանման կորելյացիայի գործակիցը



Ապրանքների հիմնական խմբերում ԶԶ-ն ունի բացասական առևտրային հաշվեկիս ԵՄ տնտեսական շուկայի հետ: Ներմուծվող ապրանքները, որ առաջացնում են բացասական առևտրային հաշվեկշիռ կազմում են մեքենա-շինություն, քիմիական, վառելիքի արդյունաբերության արտադրանքը՝ ավելացած մեծ արժեք ունեցող կապիտալատար բարիքները: Առևտրային դրական հաշվեկշիռ ունեն սև մետալուրգիայի, գյուղատնտեսության արտադրանքի վերամշակման ապրանքները՝ փոքր ավելացած արժեք ունեցող ապրանքներ:

Այնուամենայնիվ, հետաքրքրություն է ներկայացնում ԶԶ-ի միջազգային առևտրի մրցակցության համեմատական առավելության ուսումնասիրությունը տրված է աղյուսակ 1-ում:

Մրցունակության վերլուծություն

ԶԶ միջազգային առևտրի գործընթացը անցումային շրջանում ենթարկվել է զգալի փոփոխությունների: Դա տեղի է ունեցել նախկինում հաստատված տնտեսական կապերի պահպանման և միջազգային նոր շուկաների հետ համագործակցության պայմաններում: ԶԶ-ը հնարավորություն է ունեցել հաստատել միջազգային առևտուր ինչպես ԱՊՅ երկրների, այնպես էլ նոր ստեղծված աշխարհում առաջատար դիրք գրաված Եվրամիության տնտեսական շուկայի գներ: Դրա հետ մեկտեղ ԶԶ-ն հնարավորություն է ունեցել ստեղծել երկկողմանի տնտեսական կապեր Ասիական տնտեսական շուկաների երկրների հետ: Այսպիսով, առանցքային հիմնահարցերից մեկը հանդիսանում է այն, թե որքանով է պատրաստ ԶԶ-ը տնտեսություն ունենալ մրցակցային նշանակության այժմ գոյություն ունեցող միջազգային շուկաներում:

ԶԶ-ի ընթացիկ հաշվի դեֆիցիտի հիմնական բաղադրիչը կազմում է ապրանքների առևտրի դեֆիցիտը: Դրա պատճառն այն է, որ վերջին տարիների ընթացքում տեղի է ունենում արտահանման լճացում աճող ներմուծման պայմաններում: Նման իրավիճակում են գտնվում նաև մյուս զարգացող, անցումային տնտեսությունները, քանի որ դրանք ամբողջությամբ չեն կարգավորել արտահանումը և համապատասխանեցրել այն պահանջարկի նոր կառուցվածքներին:

1. Сальваторе Д. Международная экономика, Перевод с английского под ред. А.Аракеяна.-М.:Изд-во Института внешних экономических связей,1998.-714с.

2. Bergstrand H. 1985. The gravity equation in international trade: some micrieconomic foundations and empirical evidence. The Review of Economics and Statistics 67(3):474-481.

**ԱԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒԽ ԴՅ ԱՐՏԱԴԱՆՄԱՆ
ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Նորայր ՄԱԼԽԱՍՅԱՆ

*Բանալի բառեր. արտահանում, ներմուծում, համախառն ներքին արդյունք,
մրցունակություն, շուկա*

Աշխատանքը նվիրված է ԴՅ արտահանման մրցունակության ուսումնասիրությանը միջազգային շուկաներում: Առաջարկվում են արտահանման մոդելներ՝ հիմնված ԴՅ արտահանման և ներմուծող երկրի ՀՆԱ-ի վրա: Գործոններից մեկը արտահայտում է համագործակցող երկրների հեռավորությունը ու, հետևաբար, մոդելները գրավիտացիոն են: Առաջարկվում են մրցունակության ինդեքսներ, որոնց օգնությամբ ստացվում են ԴՅ արտահանման մրցունակության գնահատականները միջազգային շուկաներում:

**КОНКУРЕНТОСПОСОБНОСТЬ ЭКСПОРТИРУЕМЫХ ТОВАРОВ И
УСЛУГ Р.АРМЕНИЯ НА МЕЖДУНАРОДНОМ РЫНКЕ**

Норайр МАЛХАСЯН

Ключевые слова. экспорт, импорт, Европейский союз, СНГ, валовой внутренний продукт, конкурентоспособность, рынок.

Работа направлена на изучение конкурентоспособности экспортируемых товаров и услуг р. Армения на рынки стран ЕС и СНГ. Предложены модели экспорта и импорта Валовой продукции произведенной в Армении. Один из факторов влияющая на конкурентоспособность является расстояние с партнерами, поэтому построенные модели гравитационные. Определен рейтинг Республики Армения на основе индекса конкурентоспособности на рынке товаров и услуг стран ЕС и СНГ.

**THE ANALYSIS OF RA EXPORT COMPETITIVENESS IN THE
INTERNATIONAL MARKETS**

Norayr MALKHASYAN

Key words. Export, import, European Union, CIS (Commonwealth of Independent States), gross domestic product, competitiveness, market

The work is devoted to the research of the RA export competitiveness in the EU and CIS markets. Exporting models are offered according to the GDP of the exporting and importing county in the Republic of Armenia. One of the factors expresses the distance between cooperating countries, and consequently, the models are gravitational. Competitive indexes are offered, with the help of which the marks of RA export competitiveness in the UN and CIS markets are got.